ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

# Երուսաղէմի Հայ Գրչութեան Կենտրոնը 15րդ դարում. Սուրբ Փրկիչ

«Սիոնի» նախկին թիւերի մէջ առիթ ունեցանք ներկայացնելու Երուսաղէմի հայկական միջավայրում 14-րդ դարի գրչագրական գործունէութիւնը, որի կենտրոնն էր Ս.Հրեշտակապետաց Հայոց վանքը[1]: Յաջորդող 15-րդ դարում Երուսաղէմեան ձեռագրերն աւելի հարուստ են թէ՛ թուաքանակով, թէ՛ որակով, իսկ գրչութեան մշակներն իրենց գործունէութիւնը տեղափոխում են առաւելապէս Ս.Փրկիչ վանքը: Կարելի է ենթադրել՝ այդ ձեռագրեր բազմացնելու համար Ս.Փրկիչում ապահովուած էին յատուկ պայմաններ: Եւ իրօք, 15-րդ դարում Երուսաղէմի գրչագրական կենտրոնը հայոց Սուրբ Փրկիչ վանքն էր:

15-րդ դարից է պահպանուել Ս.Յակոբի թիւ 1 ձեռագիրը՝ չորս հատոր հսկայ Ճառընտիրը: Գրաւոր աղբիւրների ու բանաւոր վկայութիւնների համաձայն՝ ՁՍՅ թիւ 1 գլուխգործոց այս Ճառընտիրը չորս հարիւր տարի շարունակ ընթերցուել է միաբանական սեղանատան մէջ, որ ըստ Հանքէ Վարդապետի շինուել է 1451-ին[2]: Ճառընտիրի գրիչներն են Յովհաննէս ու Մանուէլ Աբեղաները, յիշատակարանում գրչութեան մասնակիցների թուում առանձնայատուկ յիշուում է «խոջա Քարիմադինին, որ զթուղթն եբեր»:

Այս ձեռագիրը ստեղծուել է երեք տարում՝ 1417-19 թուերին, հրամանով եւ ծախքով Պօղոս Պատրիարքի: Ծնունդով Արարատեան աշխարհից՝ Պօղոս Գառնեցին 1415-1419թթ. եղաւ Երուսաղէմի Հայոց պատրիարք, իսկ 1419-1430՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս: «Պօղոս... հեզահոգի ու գերընտիր վարքով անձ մը էր, գրասէր էր նաեւ իր նախորդներուն պէս», գրում է Տ.Սաւալանեանցը[3]: Յետագային ձեռագրերի պատուիրատուներից է եղել նաեւ Մարտիրոս Եգիպտացի (1419-1430), իսկ Մարտիրոս Պրուսացի Պատրիարքը (1491-1501) երիտասարդ տարիքում՝ 1463 թուականին Ս.Փրկիչում ծաղկել է Յայսմաւուրք, 1464-ին գրչագրել եւ ծաղկել է Աւետարան: Այդպիսի գրասէր հոգեւորականների ղեկաւարութեամբ բնականաբար պէտք է զարգանար գրչութեան արուեստը Երուսաղէմում:

15-րդ դարի Երուսաղէմեան ձեռագրերը թէեւ չունեն հայկական մանրանկարչութեան եւ ձեռագրական արուեստի՝ 1-2 դար առաջ ունեցած փայլը, սակայն ամենեւին զուրկ չեն արուեստականութիւնից, մանրանկարչական գունաւորումից: Գրչութիւնը հիմնուած էր նախ եւ առաջ գրիչների նուիրուածութեան, եկեղեցիների համար գրքեր բազմացնելու տարերային անհրաժեշտութեան հետ: Եւ տպաւորութիւնն այնպիսին է, որ ոչ կազմակերպուած այդ դրութիւնը շարունակուում է մինչեւ 17-րդ դարի սկիզբը, երբ Գրիգոր Պարոնտէրը եւ յատկապէս մէկ դար անց Գրիգոր Շղթայակիրը յատուկ կազմակերպուած ծրագրով սկսեցին գրիչների ու ծաղկողների հրաւիրել Երուսաղէմ, ընտիր ձեռագրեր բազմացնել տալ կամ նուէր ստանալ կամ գնել տարբեր քաղաքներից:

Երուսաղէմի ձեռագրաց մատենադարանի հիմնադրման տարեթիւը կարելի է համարել 1738 թուականը, երբ հիմնուեց *«Ս.Յակոբի Գրքատունը»*:

---

[1] Սիոն, 2002, թիւ 1-3, էջ 64-72:
[2] Սիոն, 1938, էջ 56:
[3] Տ.Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, 1931, էջ 531-32:

digitised by A.R.A.R.@

Մեր այս տեսակէտը հիմնուած է Ս.Յակոբի ձեռագրերի յիշատակարանների վրայ: Հարիւրաւոր ձեռագրեր յիշատակումներ ունեն 1738-ին Գրքատանը կատարուած նուիրատուութեան մասին: Ընդ որում նուիրողների թուում են եղել ինչպէս ուխտաւորներ տարբեր վայրերից, այնպէս էլ Ս.Յակոբի միաբանները: *Անշուշտ Ս.Յակոբի Գրքատան հիմնադրումը կատարուել է Գ.Շղթայակրի յատուկ կարգադրութեամբ, եւ ուրեմն հռչակաւոր հայ Պատրիարքի շնորհների շարքին պէտք է ընդմիշտ աւելացնել նաեւ Ս.Յակոբի ձեռագրաց Մատենադարանի նախատիպի՝ Գրքատան հիմնադրումը:*

15-րդ դարի գրական անցուդարձերից յիշենք Գրիգոր Արճիշեցու երեքամեայ դասաւանդումը Երուսաղէմի հայ ժառանգաւորներին, Յովհաննէս պատրիարքի (1479) հրամանով (այս մասին յիշատակումը պահպանուել է ՁՍՅ 352-ում):

1483-ին ուխտաւորութեամբ Երուսաղէմ է այցելում Նիկողայոս Եպս. Աղբերմանցին եւ գրի առնում Ս.Տեղեաց բոլոր ուխտատեղիները: Պատմական այդ վաւերագիրն առաջին անգամ հրատարակեց Ղեւոնդ Ալիշանը Անաստաս Վարդապետի յայտնի «Վասն վանօրէից որ ի Ս.Քաղաքս Երուսաղէմ» գրքուածքի հետ մէկտեղ:

15-րդ դարի բազմաթիւ ձեռագրեր յիշատակումներ ունեն Ս.Փրկիչ վանքի մասին: ՁՍՅ թիւ 27 ձեռագրի գրիչ Մարգարէ Աբեղան գրում է. «Արդ եղեւ զրաւ գրչութեան այսմ Աստուածաշունչ մատենի... ի հռչակաւոր Սբ. Մայրաքաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ հրաշափառ ամենափրկիչ Սբ. Կաթողիկէիս, վերածայնելոյ Սբ. Փրկիչ, որ է վէմ կափարիչ Սբ. Գերեզմանին Քի.: Յիշեցէք... եւ զՏէր Մարտիրոս եպիսկոպոսն Պուրսացի, որ աշխատեցաւ եւ ծաղկեց զգիրքս»: Մէկ այլ էջին՝ «Եղաք զԱյսմաւուրքս ի սբ. քաղաքս Երուսաղէմ, ի վանքս Սբ. Փրկչիս, ընդ հովանեաւ սբ. կափարիչ վէմիս, եւ չունի իշխանութիւն եւ հրաման ոչ առաջնորդք եւ գործաւորք հանել ի դրանէ եկեղեցոյս, ոչ ծախել եւ ոչ գրաւել. եւ եթէ ոչ լսէ՝ գնաւղն եւ ծախաւղն պատժի ի Սբ. Փրկչէն»:

Յիշատակման արժանի ձեռագրերից է 1455թ. Ս.Սաբայ վանքում գրուած Աւետարանը: Նրա յիշատակարանը վկայում է յունական Ս.Սաբայ վանքի մէջ հայկական միաբանութեան գոյութիւնը կամ առնուազն միաբանների առկայութիւնը. «Գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ եւ սուտ անուն սարկաւագի, ի լաւ եւ յընտիր օրինակէ, ի սահմանս սուրբ քաղաքիս Երուսաղէմի հռչակաւոր անապատս եւ վանս Սրբոյն Սաբայի ընդ հովանեաւ սրբոց անդ են հանգուցեալ: ...Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեսջիք զհոգեւոր եղբայրն իմ զՅովհաննէս որ զքուղքն կոկեաց եւ զՄարկոս միայնակեացն եւ զմիաբանս Սբ. Փրկչիս»: Այդ մասին վկայութիւն ունի նաեւ Հանքէ պատմիչը. «Եւ ազգս մեր ունին ի սմա մասն մի վիճակ»[4]:

* * *

Ստորեւ ներկայացնում ենք ցանկը Երուսաղէմում եւ մասնաւորաբար Ս.Փրկիչում 15-րդ դարում գրուած այն ձեռագրերի, որ պահպանուել ու հասել են մինչեւ մեր օրերը եւ յայտնի են բանասիրութեանը: Մեր կազմած ցանկն ընդգրկում է այդպիսի 49 ձեռագրերի մասին համառօտ տեղեկութիւններ, որոնցից 11-ը ներկայիս պահպանուում են Ս.Յակոբի ձեռագրատանը, իսկ 14-ը՝ Երեւանի Մատենադարանում:

---

[4] Հանքէ Վրդ., Գիրք Պատմութեան Ս.Երուսաղէմի, Կ.Պոլիս, 1782, էջ 279: Նաեւ՝ Յիշատակարաններ ԺԵ դարի, Բ, թիւ 86:

digitised by A.R.A.R.@

# ՑԱՆԿ

## 15-րդ դարում Երուսաղէմում գրուած հայերէն ձեռագրերի

| N | Թուական | Գրչութեան վայրը | Բովանդակութիւնը | Գրիչներ, ծաղկողներ, կազմողներ, գրչի յիշատակարաններ Ձեռագրի ներկայ գտնուելու վայրը |
|---|---|---|---|---|
| 1. | 1407 | Ս.Յարութիւն | Գ.Տաթեւացի, Գիրք Հարցմանց | Գրիչ՝ Կարապետ Արդ. Վրաստանեցի, ստացող Վահրամ Քահանայ: Ձեռագիր Երեւանի Մատենադարանի, թիւ 918: |
| 2. | 1409[a] | Երուսաղէմ | Տօնացոյց | Գրիչ՝ Ալէքսիանոս Աբեղայ: Յիշտկ. ԺԵ դարի, Ա, թիւ 101: |
| 3. | 1411 | Ս.Յարութիւն | Մանրուսմունք | Գրիչ եւ ծաղկող Յովհաննէս Սանահնեցի: Յիշտկ. ԺԵ դարի, Ա, թիւ 132: |
| 4. | 1415 | Ս.Յակոբ | Յանախապատում | Գրիչ Գրիգոր Վրդ. Խլաթեցի Ծերենց, որ նուիրել է Մկրտիչ Վարդապետին: Ձեռ. Երեւանի Մատ. թիւ 8775: |
| 5. | 1416 | Ս.Յար. | Աւետարան | Գրիչ՝ Յոհաննէս քահանայ: Այս ձեռագրի պատուիրատուն՝ Կարապետ Վրդ. Քաջբերունեաց, որ 1416-ին ուխտաւորութեամբ այցելել է Երուսաղէմ, յետագայում գիրքը նուիրել է Արճէշի Արծուաբեր վանքին, որի վանահայրն ինքն էր: Յշտկ. «Գրեցաւ սա... ի մեծափառ եւ եւ ի գերահրաշ աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ի մէջ Յարութեանս, ի դուռն Սուրբ Գերեզմանիս, եւ ընդ հովանեաւ Սուրբ Գողգոթայի եւ այլ տնօրինականացս Քրիստոսի Այ. մերոյ»: Յիշտկ. ԺԵ դարի, Ա, թիւ 207: |
| 6. | 1417 1419 | Ս.Յակոբ | Ճառընտիր | Գրիչք Մանուէլ Աբեղայ, Յովհաննէս Աբեղայ Երզնկացի, հրամանով Երուսաղէմի Պօղոս Պատրիարքի: Ձեռագիր Ս.Յակոբի, թիւ 1: |
| 7. | 1419 | Ս.Յակոբ | Ն.Շնորհալի, Բանք Զափաւ, Յիսուս Որդի | Գրիչ Յովհաննէս Աբեղայ, համահեղինակ գրչին է ՁՍՅ թիւ 1 հոյակապ Ճառընտիրի, գրել է Յակոբ Աբեղայի խրնդրանքով: Ձեռ. Եր. Մատ. 1551: |
| 8. | 1419 | Ս.Յակոբ | Ժողովածու | Գրիչ Բարսեղ Քահանայ, ստացող Սիմէոն Կրօնաւոր: Ձեռ. Եր. Մատ. 3201: |
| 9. | 1422 | Երուսաղէմ | Ճաշոց | Գրիչ Սամուէլ Աբեղայ, ստացողք Կարապետ Կնդագրակցի եւ Յովհաննէս Մղաչուրցի աբեղաներ: Ձեռ. Անկիւրիոյ թիւ 161: |
| 10. | 1424 | Ս.Յակոբ | Մեկնութիւն Կաթողիկեայց Սարգիս Վրդ. | Գրիչ Յովհաննէս Աբեղայ, ծաղկող Սիմէոն Արդ. Մելտինցի: Գրուել է Ս.Փրկչին նուիրելու համար. «Եւ արդ ես Յովհաննէս Աբեղայս եդի զգիրս ի Ս.Փրկիչս յիշատակ ինձ եւ ամենայն Արեան մերձաւորացն իմոց: ՁՍՅ 67: |
| 11. | 1424 | Ս.Փրկիչ[5] | Գ.Տաթեւացի Քարոզգիրք | Գրիչ Մկրտիչ Արդ. Ղրիմեցի: Ձեռ. Եր. Մատ. 2167: |
| 12. | 1426 | Ս.Յակոբ | Յայսմաւուրք | Գրիչ Թորոս Աբեղայ: Ձեռ. Եր. Մատ. 7362: |
| 13. | 1426 | Ս.Փրկիչ | Սաղմոսարան | Գրիչ Ղազար Ղրիմեցի, Մելքիսեդ Եպս. հրամանով, գլխագրերը ծաղկող՝ Վարդան Աբեղայ: ՁՍՅ 1988: |
| 14. | 1427 | Ս.Յակոբ | Գ.Տաթեւացի Մեկնութիւն Մատթէոսի | Գրիչ Թորոս Աբեղայ, Մելքիսեդ Վրդ.-ի համար: Ձեռ. Եր. Մատ. 5133: |
| 15. | 1427 | Ս.Յար.[a] | Մեկնութիւն Կաթողիկեայց Սարգիս Վրդ. | Գրիչք Վարդան եւ Տիրատուր Աբեղաներ, ստացող Մկրտիչ Աբեղայ: Յշտկ. «Տէր Աստուած ողորմեա ստացողի գրոյս Մկրտիչ Աբեղայիս, որ է լուսարար Սուրբ Յարութեան եւ Սուրբ Գողգոթայիս, եւ գծողաց սուրբ տառիս Տիրատուր եւ Վարդան Աբեղայիցս: Յիշեցէք զԵղիսաբէդ հաւատաւորն, որ |

[5] Սուրբ Փրկիչում գրուած ձեռագրերը ընդգծուած են:

digitised by A.R.A.R.@

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Վարդան Աբեղայիցս: Յիշեցէք զեղիսաբէդ հաւատաւորն, որ յոյժ երախտաւոր է մեզ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ»: Յիշտկ. ԺԵ դարի, Ա, թիւ 396: |
| 16. | 1432 | Ս.Փրկիչ | Գանձարան | Գրիչ Տիրատուր Աբեղայ, Յովհաննէս Աբեղայի խնդրանքով: Ձեռ. Ե՛ր. Մատ. 8242: |
| 17. | 1432 | Ս.Յար. | Գ.Տաթեւացի Մեկնութիւն Սաղմոսաց | Գրիչ Յակոբ Արդ. Բերկրեցի, ծաղկող՝ Մելիքսէթ Աբեղայ: Ձեռ. Ե՛ր. Մատ. 1125: |
| 18. | 1433 | Ս.Փրկիչ | Ճաշոց | Գրիչ Տիրատուր Աբեղայ: ՁՍՅ 3232: |
| 19. | 1439 | Ս.Յար. | Յայսմաւուրք | Գրիչ Սարգիս Արդ. Մելիքենց Երուսաղէմի Մարտիրոս Պատրիարքի պատուէրով: ՁՍՅ 75: |
| 20. | 1439 | Ս.Յար. | Աւետարան | Գրիչ Սարգիս Արդ. Մելիքենց, Թուրվանտայ անունով ապաշխարողի խնդրանքով: Ծաղկողը եւ կազմողն է Գրիգոր Էլմէլիքենց Արծկեցի՝ Ս.Հրեշտակապետաց վանքի մէջ: Ձեռ. Անկիւրիոյ 312: |
| 21. | 1439 | Ս.Յար. | Ճաշոց | Գրիչ Սարգիս Արդ. Մելիքենց: Ձեռ. Ղալաթիոյ թիւ 38: |
| 22. | 1439 | Ս.Յար. | Յաստմաւուրք | Գրիչ եւ ծաղկող Գրիգոր Էլմէլիքենց Արծկեցի (գրչութեանը մասնակցել են նաեւ Երեմիա եւ Սարգիս գրիչները): Պատուիրատու՝ Երուսաղէմի Մարտիրոս Եպիսկոպոս: ՁՍՅ 75: |
| 23. | 1440° | Երուսաղէմ | Աղօթամատոյց | Գրիչ Սարգիս, կազմող Աբրահամ: Այժմ ի Վենետիկ: |
| 24. | 1441 | Ս.Հրեշտակապետաց | Յաստմաւուրք | Գրիչ եւ ծաղկող Գր. Էլմէլիքենց Արծկեցի, Գրիգոր Կրօնաւորի փափագով: Յիշտկ. ԺԵ դարի, Ա, թիւ 597: |
| 25. | 1441 | Ս.Հրշտկ. | Աւետարան | Գրիչ եւ ծաղկող Գր. Էլմէլիքենց Արծկեցի, ստացող Ներսէս Կրօնաւոր Քահանայ: Ձեռ. Անթիլիասի թիւ 84: |
| 26. | 1449 | Ս.Փրկիչ | Գանձարան | Գրիչ Թադէոս Կրօնաւոր, կազմող Յովհաննէս Կրօնաւոր: Նուիրուել է Ս.Հրեշտակապետացին: Սիոն, 1927, էջ 369-72, Յիշտկ. ԺԵ դարի, Գ, թիւ 557: |
| 27. | 1449 | Ս.Յակոբ | Յիսուս Որդի | Գրիչ Թադէոս Կրօնաւոր, ծաղկող Յովհաննէս, Յովհաննէս կուսակրօն քահանայի խնդրանքով: Ձեռ. Ե՛ր. Մատ. 5297: |
| 28. | 1454° | Երուսաղէմ | Գանձարան | Գրիչ Ներսէս Երէց: Նոտարք, էջ 18-19: |
| 29. | 1454 | Ս.Յակոբ | Յովհաննու Աւետարան | Գրիչ Սիմէոն Վարդապետ, Յովհաննէս *Տաթիկ* Եպիսկոպոսի համար. «Գրեցաւ ի խնդրոյ... հոգեւոր եղբարս մերոյ Յովհաննէս Եպիսկոպոսին, որ մականուն Տաթիկ կոչի»: Ձեռ. Ե՛ր. Մատ. 9323: |
| 30. | 1455 | Ս.Սարգիս վանք | Աւետարան | Գրիչ Թադէոս Սարկաւագ, թուղթը կոկող Յովհաննէս: Յիշտկ. ԺԵ դարի, Բ, թիւ 86: |
| 31. | 1457 | Ս.Յակոբ | Գանձարան | Գրիչ եւ ծաղկող Տէր Սարգիս: Յշտկ. «Գրեցաւ սա... ընդ հովանեաւ Սբ. եկեղեցոյս, որ է հանգստարան Սբ. գլխոյն Յակոբայ»: Ձեռ. Հալէպի 165: Ունի թուղթագիր սկզբնատառ, լուսանցազարդ 85 հատ, խորան 1 հատ: |
| 32. | 1462 | Ս.Փրկիչ | Աւետարան | Գրիչ եւ ծաղկող Հայրապետ Եպիսկոպոս, *Իկոտիշ* անուն ապաշխարողի համար: Յիշտկ. ԺԵ դարի, Գ, թիւ 593: |
| 33. | 1463 | Ս.Փրկիչ | Յաստմաւուրք | Գրիչ Մարգարէ Աբեղայ, ծաղկող Մարտիրոս Եպս. Պրուսացի, որ յետոյ Պատրիարք դարձաւ, ստացողք Առաքել, Աբրահամ եւ Մարգարէ կրօնաւորք: ՁՍՅ 27: |
| 34. | 1464 | Երուսաղէմ | Աւետարան | Գրիչ եւ ծաղկող Մարտիրոս Եպս. Պրուսացի, գրչութիւնը սկսել է 1458-ին: ՁՍՅ 2567, գտնուում է Ս.Յակոբի Գանձատանը: |
| 35. | 1465 | Ս.Յակոբ | Աւետարան | Գրիչ Թորոս Աբեղայ: Յիշտկ. ԺԵ դարի, Բ, թիւ 298: |
| 36. | 1466 | Ս.Հրշտկ. | Աղօթագիրք | Գրիչ Մանուէլ, ընդօրինակել է ձեռագրի մի մասը, իսկ միւս մասը՝ Սարգիս Գրիչ: Յշտկ. «Արդ գրեցաւ սա ի Սուրբ եւ աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Սբ. Հրեշտակապետացս Գաբիրէլի եւ Միքայէլի եւ ամենայն զաւրացն, որ է տեղիք չարչարանաց Փրկչին»: ՁՍՅ |

digitised by A.R.A.R.@

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | մենայն գաւրացն, որ է տեղիք չարչարանաց Փրկչին»: ՀՍՅ 1662: |
| 37. | 1467 | Ս.Փրկիչ | Յիսուս Որդի | Գրիչ Սողոմոն Աբեղայ, Յովհաննէս Միակէցի խնդրանքով: Հեռ. Եր. Մատ. 6042: |
| 38. | 1468 | Ս.Փրկիչ | Մաշտոց | Գրիչ Աստուածատուր Աբեղայ Տրապիզոնցի, Առաքել Աբեղայի խնդրանքով: Թորոս Աղբար, Բ, էջ 465: |
| 39. | 1469 | Ս.Հրշտակ. | Աղօթագիրք | Գրիչ Սարգիս, Լեռնակողման Վանքի Վանահայր Աբրահամ Աբեղայի խնդրանքով: ՀՍՅ 1662: |
| 40. | 1473 | Երուսաղէմ Ս.Աստուածածին | Ոսկեփորիկ | Գրիչ Հոբստակէս Քահանայ (մասամբ), շարունակողն է Աւետիք Եպիսկոպոս՝ Երուսաղէմից ոչ հեռու Ս.Աստուածածին վանքի մէջ. «յԵրուսաղէմ Ս.քաղաքի ի վանս Ս.Աստուածածնի մերձ առ դրունս Բեթխահէմի»: Հեռ. Վիեննայի Մատ. 146: |
| 41. | 1475 | Ս.Փրկիչ | Աւետարան | Գրիչ Սողոմոն Աբեղայ, նկարող եւ կազմող Յովհաննէս, Մխիթար Աբեղայ Տեշաղեցիի խնդրանքով: ՀՍՅ 1943: |
| 42. | 1476 | Ս.Փրկիչ | Շարակնոց | Գրիչ Սողոմոն Աբեղայ, Մարխաթունի խնդրանքով՝ «Ի վայելումն եղբաւրորդւոյն իւրոյ Տէր Յուսիկ կրաւնաւորին»: Հեռ. էջմնածնի 222: |
| 43. | 1476 | Ս.Յակոբ | Ժողովածու | Գրիչ Կարապետ Կրօնաւոր: Հեռ. Եր. Մատ. 2335: |
| 44. | 1478 | Ս.Յակոբ | Շարական | Գրիչ Նիկողայոս Կրօնաւոր Պոնտացի, ընդօրինակումը սկսել է Ս.Յակոբում, սակայն աւարտել է այլ վանքերում: ՀՍՅ 1620: |
| 45. | 1479 | Ս.Փրկիչ | Աղօթամատոյց | Գրիչ Գրիգոր Կրօնաւոր: Հեռ.-ը ժամանակին գտնուելիս է եղել Պարտիզակի եկեղեցում: Յիշտակ. ԺԵ դարի, Բ,թիւ 560: |
| 46. | 1485 | Ս.Յակոբ | Աւետարան | Գրիչ Սիմէոն: Յիշտակ. ԺԵ դարի, Գ, թիւ 92: |
| 47. | 1485 | Ս.Յակոբ | Աւետարան | Գրիչ Աւետիք Աբեղայ Հաղբատեցի, ստացող Պարոն Վարդան որդի Ոսկէվանի: Յշտկ. «Արդ գրեցաւ սա ի Սբ. քաղաքն յԵրուսաղէմ, ի դուռն Սբ. Յակոբայ: Ի հայրապետութեան Տր. Մկրտչի արհիեպս.ի..., ի թուականիս հայոց ՉԼԴ (1485)»: Աղաւնունի, Միաբանք..., էջ 40: |
| 48. | 1490 | Ս.Յակոբ | Ժողովածու | Գրիչ եւ ստացող Զաքարիա: Հեռ. Եր. Մատ. 1137: |
| 49. | 1497 | Ս.Յակոբ | Գանձարան | Գրիչ Վրթանէս Աբեղայ Արեւելցի, Ստեփանոսի որդի Երէցի խնդրանքով, ստացող Տէր Աւագ Քահանայ: Յշտկ. «Արդ գրեցաւ ի քաղաքս Սբ. Եէմս, ընդ հովանեաւ Սբ. Յակոբիս եւ այլ Սբ. Տնաւրինականացս Քրիստոսի»: Սիոն, 1928, էջ 273: Հեռ. Հալէպի 71: Ունի շատ լուսանցազարդեր, զարդարուն սկզբնատառեր եւ խորան 1 հատ: |

Նորայր Պողոսեան
Բանասիրական գիտ. թեկնածու

digitised by A.R.A.R.@